ԼՈՒՍ ՁՈՒՂԱՓ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԺԲ ՏԱՐԻ, ԹԻՒ 103, ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 2014

ԳԵՐԱՑԵՈՒՐ
ՏԷՐ ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԱՐԵԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՈՒԹ ԵՆԹԱՅԱՆՁՆԱԽՄԲԵՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՀԱՒԱՔ

Թուականիս յուլիսի 14-ին, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից կեանքի կոչուած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կենտրոնական մարմնի հրաւէրով, Ս.Ա. Վանքի նահատակաց յուշարձանի յարակից տարածքում, տեղի ունեցաւ անդրանիկ հանդիպումը սոյն մարմնի կողմից նշանակուած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի միջոցառումներն իրականացնող ութ ենթայանձնախմբերի հետ: Հանդիպումից առաջ ներկաները ծաղիկներ զետեղեցին Ս. Ամենափրկչեան Վանքում վեր խոյացած Ապրիլեան նահատակների յուշարձանի մօտ, որից յետոյ Սրբազան Հօր միջոցով կատարուեց Հոգեհանգստեան աղօթք:

Հանդիպմանը, նախ կենտրոնական մարմնի նախագահ՝ պրն. Նոէլ Մինասեանը, ողջոյնի խօսք ուղղելով, ներկաներին իր շնորհակալութիւնը յայտնեց նրանց՝ հրաւէրն ընդառաջելու համար: Նա պատահական չհամարելով յուշարձանի յարակից տարածքի ընտրութիւնը որպէս հանդիպման վայր, նշեց, որ դա հանդիսանում է պահանջատիրական մեր պայքարի ուխտի վերանորոգման խորհրդանիշ:

Պրն. Նոէլ Մինասեանը ներկայացրեց այն երկու հիմնական ուղղութիւնները, որոնց հիման վրայ պէտք է կազմակերպել աշխատանքները. արտաքին ճակատ՝ պարսկական շրջանակ, եւ ներքին ճակատ՝ շեշտելով մատաղ սերնդին ու երիտասարդութեանը պահանջատիրական ոգով դաստիարակելու անհրաժեշտութիւնը: Այնուհետեւ նա ներկաներին փոխանցեց նախապատրաստական այն աշխատանքները, որոնք իրականացուել են սոյն կազմի միջոցով, յատկապէս շեշտելով Ս.Ա. Վանքի յուշարձանի յարակից տարածքի բարեզարդումը եւ դասաւորումը:

Պրն. Մինասեանը կարեւորութեամբ ընդգծելով Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի կողմից կազմակերպուող համազգային նշանակութեամբ ծրագրերին Թեմիս մասնակցութեանը, կարեւորեց նաեւ երկրի պետական այրերի ներկայութիւնը մեր միջոցառումներում ապահովելու հարցին:

Կենտրոնական մարմնի նախագահ՝ պրն. Նոէլ Մինասեանը 100-ամեակը Ցեղասպանութեան միջազգայնօրէն ճանաչման եւ վնասից հատուցման նոր հանգրուանի սկզիբը համարելով, յոյս յայտնեց, որ Հայաստանի եւ Սփիւռքի մեր հայրենակիցները, միասնաբար եւ առաւել թափով աշխատելու են յանուն հայ ժողովրդի իրաւունքների վերականգնմանը եւ խթանելու են միջազգային ատեաններում մեր պահանջատիրական ձայնը աւելիով լսելի դարձնելու գործին:

Այնուհետեւ արտայայտուեց թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ով ողջոյնի արտայայտութիւններից յետոյ, անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի խորհրդին եւ յոյս յայտնեց, որ իւրաքանչիւր անհատ ամենայն պատասխանատուութեամբ է մօտենալու այս իրողութեանը եւ նպաստելու է 100-ամեակի ծրագրերի յաջող անցակցմանը:

Թեմական առաջնորդն յայտնեց, որ Թեմի 100-ամեակի Կենտրոնական մարմինը մասնակցել է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի միջոցառումների նախապատրաստութեան շրջանակում Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի եւ Հ.Հ.-ի Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած համաժողովներին, որոնց ընթացքում առիթ է ստեղծուել ծանօթանալ տարբեր շրջաններում նախատեսուած ծրագրերին, իսկ համազգային նշանակութիւն ունեցող ծրագրերից անդրադարձաւ 2015 թուականի Ապրիլի 23-ին նահատակների սրբադասման արարողութեանը, եւ 100-ամեակի առիթով Պիքֆայայում՝ նահատակների յուշարձանի առջեւ տեղի ունենալիք Միւռոնօրհնէքին:

Վերջում թեմական առաջնորդը յոյս յայտնեց, որ միասնաբար կազմակերպելու են Սպահանի հայոց

Շարունակութիւնը՝ 3-րդ էջում

ՀՈՎԻԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՇԻՐԱԶԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Շորեքշաբթի՝ յուլիսի 30-ին, Սպահանի հայոց թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ընկերակցութեամբ ազգային իշխանութեան ներկայացուցիչների՝ Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետ պրն. Վարուժ Մինասեանի, Կրօնական խորհրդի փոխ-ատենապետ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի եւ Թեմական խորհրդի փոխ-ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանի, այցելութիւն տուեց Շիրազի հայ համայնքին:

Շորեքշաբթի երեկոյեան առաջնորդ Սրբազան Հօրը եւ նրան ուղեկցող պատուիրակութեանը Հայ տան մէջ դիմաւորեցին Շիրազի Հայոց եկեղեցական վարչութեան ներկայացուցիչները: Յաջորդ առաւօտեան, պատուիրակութիւնը Հայոց եկեղեցական վարչութեան ատենապետ պրն. Հերմոնդ Յարութիւնեանի հետ այցելեց Շիրազի հայոց եկեղեցի եւ ծանօթացաւ եկեղեցու, եկեղեցու սպասքների եւ տարածքի պահպանման աշխատանքներին, ապա այցելեցին հայոց հին գերեզմանատուն:

Նոյն օրը, երեկոյեան, առաջնորդ Սրբազան Հայրը եւ ազգային իշխանութեան ներկայացուցիչները հանդիպում ունեցան Համայնքի վարչութեան անդամների, Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան եւ «Արարատ» միութեան ներկայացուցիչների հետ: Առաջնորդ Սրբազան Հայրը եւ պատուիրակութեան անդամներն իրենց խօսքերի մէջ մի շարք խորհուրդներ փոխանցեցին ներկաներին եւ միաժամանակ լսեցին նրանց մտահոգութիւնները՝ համայնքային խնդիրների վերաբերեալ:

Աւելի ուշ, Թեմական առաջնորդը եւ ազգային իշխանութեան ներկայացուցիչները ներկայ գտնուեցին տէր եւ տկն. Եփրեմ եւ Արփիկ Վարդումեանների կողմից կազմակերպուած ընթրիքի սեղանին՝ իրենց դստեր սուրբ ամուսնութեան ուրախ առիթով, որին ներկայ էին համայնքի բոլոր անդամները: Երեկոյի ընթացքում պատուիրակութեան անդամներն իրենց խօսքերն ուղղեցին շիրազահայութեանը, երգեր եւ աստուածաշունչ հնչեցին ներկայ անձանց կողմից: Առաջնորդ Սրբազան Հայրը եւս իր շնորհաւորանքի պատգամը փոխանցեց նորապսակ զոյգին՝ մաղթելով երջանիկ եւ քաջառողջ կեանք, իսկ շարունակութեան մէջ համայնքի անդամներին մաղթեց ուժ եւ կորով՝ նոյն ոգով շարունակելու իրենց հաւաքական, ազգային եւ եկեղեցական կեանքը: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն իր խօսքերի մէջ յիշեցրեց «Տարեցների տարեայ» մասին եւ յայտնեց, որ այդ շրջագծում՝ տարեցներին մեծարելու եւ յարգելու նպատակով, ընթացիկ տարեայ մէջ կազմակերպելու են միջոցառումներ: Իր խօսքի վերջաւորութեանը գերշ. Սրբազան Հայրն անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին եւ բոլորին յորդորեց առիթն օգտագործել լայնածաւալ աշխատանքներով, առաւել միասնական ճիգով ու պայքարով եւ պահանջատիրական ոգով շարունակել մեր յաղթական երթը:

Կէսգիշերին թեմական առաջնորդը եւ պատուիրակութեան անդամները հրաժեշտ տալով շիրազահայ համայնքին՝ վերադարձան Նոր Ջուղա:

ԳԵՐԾ. Տ. ԲԱԲԳԷՆ ԵՊՍ. ՉԱՐԵԱՆԸ ՕՐՀՆԵՑ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆԻՈՐՆԵՐԻՆ

Շաբաթ՝ 26 յուլիսի 2014-ի առաւօտեան ժամը 10-ին, Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն եպս. Չարեանը ներկայ գտնուեց Հ.Հ.-ի զինուորների երդման հանդիսաւոր արարողութեանը:

Կանադահայ մի ազնիւ հայորդու բարերարութեամբ բոլոր զինուորների համար պատրաստուել էին գրպանի յատուկ Նոր Կտակարան-Սաղմոսներ: Հանդիսութեանը ներկայ էին բարերարն ու Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան ներկայացուցիչը: Արարողութեան ընթացքում, ամէն զինուոր իր երդումից յետոյ ստացաւ իր սեփական Նոր Կտակարանը ձեռամբ գերշ. Բաբգէն Սրբազանի, ինչպէս նաեւ՝ բարերարի, հրամանատարների եւ զօրամասի հոգեւոր հովիւ՝ Տ. Զաքարիա Քահանայի:

Զօրահանդէսով ուղեկցուած հանդիսութիւնը փակուեց գերշ. Սրբազան Հօր ոգեշնչող պատգամով: Սրբազանն իր գոհունակութիւնը յայտնեց այս եզակի արարողութեանը ներկայ գտնուելու համար եւ իր խօսքում մասնաւորապէս կարեւորեց հայ զինուորի դերը հայոց կեանքում, բայց մանաւանդ հայրենիքի պաշտպանութեան գործում: Նա նշեց. «*Իւրաքանչիւր հայի սիրտ այս պահին ձեր առաջ հպարտութեամբ եւ ոգեւորութեամբ է լցւել, գիտակցական այն համոզումով, որ, սիրելի երիտասարդնե՛ր, հայոց պետականութեան ամբողջականութիւնը եւ հայրենիքի պաշտպանութեան գործը ձեզ է յանձնուած։ Դուք պաշտպանում էք մեր հայրենի սահմանները, առաւել եւս, ձեր ծնողներին, ձեր քոյրերին եւ եղբայրներին։ Ձեզ այսօր տուեց նաեւ Ս. Գիրք՝ նիւթական զէնքի կողքին Տիրոջ խօսքը, իրրեւ հոգեւոր զէնք, որ ձեզ պաշտպանի վտանգներից, նեղութիւններից եւ ամէն տեսակի փորձութիւններից*»: Գերշ. Սրբազանն անփորձանք ծառայութիւն մաղթեց բոլորին եւ ասաց. «*Քանի ունենք նման երիտասարդներ, հայոց ժողովուրդը ապրելու եւ գոյատեւելու է։ Կեցցէ՛ հայոց բանակը, կեցցէ՛ հայ զինուորը*»:

Հանդիսաւոր արարողութիւնը փակուեց գերշ. Սրբազան Հօր «Պապհպանիչ» աղօթքով, որից յետոյ նա այցելեց նաեւ զօրամասի բուժկէտ եւ աղօթեց բուժող զինուորների համար:

Շարունակութիւն՝ 1-ին էջից

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ...

թեմին վայել միջոցառումներ, բնաբան ունենալով «Ես յիշում եմ եւ պահանջում» կարգախօսը:

Սրբազան Հօր խօսքերից յետոյ արտայայտուեց Կենտրոնական մարմնի անդամ՝ պրն. Աշոտ Դաւթեանը, ով անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի շեմին Թուրքիայի կառավարութեան որդեգրած նոր քաղաքականութեանը, նշեց, որ Թուրքիան փորձում է որոշ նախաձեռնողական քայլերի դիմելով շեղել հանրային կարծիքը իրականութիւնից, հետեւաբար անհրաժեշտ է աչալուրջ հետեւել հարցերին եւ իրականութեան լոյսի ներքոյ հակազդել թշնամու սադրանքներին:

Վերջում ընթերցուեց ութ ենթայանձնախմբերի անուանացանկը եւ հիւրասիրութեամբ աւարտուեց հանդիպումը:

ԻՐԱՆԻ ՍՊՈՐՏԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԱՅՑԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ

Շորեքշաբթի՝ 2014 թւականի օգոստոսի 20-ի երեկոյեան, անձնական այցով Ս. Ամենափրկչեան վանք ժամանեց Իրանի սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարի տեղակալ՝ դկտ. Ղոլամռեզա Շաբանի Բահարը:

Նախարարի տեղակալին ընկերակցում էր Սպորտի եւ երիտասարդութեան հարցերի Սպահան նահանգի կազմակերպութեան գլխաւոր տնօրէն՝ դկտ. Մոհամմադ Սոլթանհոսէյնին:

Հիւրերին Ս.Ա. վանքում դիմաւորեցին Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Կենտրոնական Վարչութեան նախագահ՝ պրն. Մասիս Մինասեանը, փոխ-նախագահ՝ տկն. Այլին Մելիքեանը եւ կազմի անդամ՝ պրն. Նարբէյ Քոչարեանը: Հիւրերն այցելեցին Ս.Ա. վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի, «Խաչատուր Կեսարացի» թանգարան եւ Վանքի շրջափակում գտնուող տեսարժան այլ վայրեր եւ բարձր տպաւորութեամբ ու գնահատանքի խօսքերով հրաժեշտ տուեցին «Արարատ» Միութեան պատասխանատուներին:

´àôÆÜ-ØÆ²Ü¸²Þîæ ¶²ô²è²ä°îæ ²ÚòÀ ê. ²Ø°Ü²öðÎâ°²Ü ì²Üø

Շորեքշաբթի՝ 20 Օգոստոս 2014-ին, Բուին-Միանդաշտի գաւառապետ՝ պրն. Էսֆանդեաո Թաջմիռին, թաղապետ՝ պրն. Սանէին, գաւառապետարանի հանրային կապի պատասխանատուն եւ այլ պաշտօնատար անձինք քաղաքավարական այցով ժամանեցին Ս. Ամենափրկեանչ վանք:

Հիւրերին Ս.Ա. վանքի «Ծաղկեայ դահլիճ»-ում դիմաւորեցին Պատգ. ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր՝ պրնչք. Վարուժ Մինասեանը, Նոէլ Մինասեանը, Արշալոյս Խուդաւերդեանը եւ Թեմական խորհրդի անդամներ՝ պրնչք. Վարուժ Մովսիսեանն ու Սարօ Դիլանչեանը:

Երկուստեք հնչած ողջոյնի եւ բարեմաղթանքի խօսքերից յետոյ, Փերիոյ գաւառապետը համապարփակ տեղեկութիւններ փոխանցեց Փերիոյ շրջանում նախատեսուած տնտեսական զարգացման ծրագրերի վերաբերեալ, այնուհետեւ Թեմական Խորհրդին եւ համայնքիս անդամներին՝ որպէս Փերիոյ շրջանում երկար տարիներ ապրած ժողովուրդ, հրաւիրեց ներդրում կատարելու այդ ոլորտում:

Հանդիպման ընթացքում շեշտուեց Փերիոյ շրջանում հայութեան մեծ աւանդը եւ թողած մշակութային ժառանգութիւնը, իսլամ-քրիստոնեայ ժողովրդների տարիների խաղաղ համագոյակցութիւնը եւ նրա կարեւոր նշանակութիւնը:

êä²Ð²ÜÆ ä°î²Î²Ü Ð²Ø²Èê²ð²ÜÆ îÜúð¾ÜÆ ²ÚòÀ ²¼¶²ÚÆÜ ²è²æÜàð¸²ð²Ü

Կիրակի՝ 2014 թւականի օգոստոսի 3-ին, Ս. Ամենափրկչեան վանք այցելեց Սպահանի պետական համալսարանի ընդհանուր տնօրէն պրն. Թալեբին: Նրան ընկերակցում էին համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի եւ Միջազգային յարաբերութիւնների գրասենեակի տնօրէնները: Պատուիրակութեանը ազգային առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում ընդունեցին Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերը եւ պետական համալսարանում աշխատող հայ դասախօսներ:

Հանդիպման սկզբում արտայայտուեց Սպահանի պետական համալսարանի տնօրէն դոկտ. Թալեբին՝ լուսաբանելով այցելութեան նպատակը: Նա իր խօսքերի ընթացքում շեշտեց հայ համայնքի եւ պետական համալսարանի միջեւ առկայ սերտ կապի ու համագործակցութեան մասին, վկայակոչելով Հայագիտական ամբիոնի ստեղծումը՝ կառուցած հայ համայնքի նիւթական ջանքերով: Նա իր խօսքերի շարունակութեան մէջ աւելացրեց. «*Սպահանի պետական համալսարանի յառաջիկայ ծրագրերի մէջ նախատեսւել է հայագիտական ճիւղի գերլիսանսի առաջացումը: Ցոյսով ենք ինչպէս անցեալում, այսօր եւս այս աշխատանքի իրագործման ուղղութեամբ վայելելու ենք առաջնորդարանի հովանաւորութիւնը: Համոզւած ենք, որ համատեղ գործակցութեան առումով գոյութիւն ունի մեծ ներուժ, որը դեռեւս ամբողջութեամբ չի օգտագործւել, եւ յոյսով ենք դրա արդասիքը տեսնելու ենք ապագային*»: Դոկտ. Թալեբին խօսելով համալսարանի միջազգային յարաբերութիւնների մասին ասաց. «*Դրանով հանդերձ, որ Երեւանի պետական համալսարանի հետ փոխանակել ենք ուսանողներ եւ դասախօսներ, այնուամենայնիւ այդ յարաբերութիւնները տակաւին ընդլայնման կարիք ունեն. վստահ ենք, որ Իրան-Հայաստան քաղաքական եւ տնտեսական լայն համագործակցութիւնների շրջագծում, ընդլայնելու է նաեւ գիտական մակարդակի գործակցութիւնը եւ հայ համայնքը միջնորդ օղակ է հանդիսանալու այդ կարեւոր գործում*»: Նա աւելացրեց. «*Բարեբախտաբար Հայագիտականի երկար տարիների աշխատանքի արդիւնքում դաստիարակւել են բազմաթիւ ուսանողներ, որոնցից մի մասն այժմ աշխատում են որպէս դասախօսներ: Լիայոյս ենք, որ Հայաստանից եւս կունենանք հրաւիրեալ դասախօսներ, որի համար անհրաժեշտ է ազգային իշխանութեան օժանդակութիւնը*»:

Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունելով հիւրերի ներկայութիւնը, իր խօսքերում անդրադարձաւ Ազգային Առաջնորդարանի եւ Սպահանի պետական համալսարանի վաղեմութիւն ունեցող գործակցութեանը եւ իր պատրաստակամութիւնը յայտնեց այսուհետեւ եւս շարունակել նոյն ձեւով, յատկապէս Երեւանի եւ Սպահանի պետական համալսարանների միջեւ ստեղծւած կապը հզօրացնելու եւ զարգացնելու ուղղութեամբ, ինչն առիթ է երկու երկրների միջեւ բարեկամական յարաբերութիւնների զարգացմանն ու ընդլայնմանը:

Թեմական առաջնորդը բարձր գնահատելով ուսման ոլորտում համալսարանի գործունէութիւնը, աւելացրեց. «*Ուսումը խիստ անհրաժեշտութիւն է, առանց որի հնարաւոր չէ որեւէ աչքառու ձեռքբերում արձանագրել: Ուրախ ենք, որ նոր սերունդը կարեւորում է ուսումը եւ մասնագիտանում թէ պետական եւ թէ ազատ համալսարաններում: Մենք եւս մեր երիտասարդների թիկունքին ենք եւ նրանց խրախուսում ենք հետեւելու ուսմանը եւ մասնագիտացմանը, որպէսզի ապագայում ունենանք առողջ ու գիտակից ղեկավարներ եւ մարդուժ, դրա պատճառով եւ ամենամեայ կարգով գնահատում ենք համալսարան մուտք գործող մեր ուսանողներին: Այսօր աշխարհում ականատես ենք ողբերգական դէպքերի, որոնք առողջ բանականութեան եւ գիտակցութեան պակասի արդիւնք են. առողջ գիտակցութիւնը բոլորի մօտ զարգացնելու իմաստով համալսարանները կարեւոր անելիքներ ունեն*»:

Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, նշեց. «Յաջորդ տարի հայ ժողովրդի համար նշանակալից թւական է: 2015-ին լրանալով Հայոց ցեղասպանու-

թեան 100-ամեակը, մեզ կարեւոր դերակատարութիւն է վերապահուած Հայ դատը ծանօթացնելու ամբողջ աշխարհին: Այս առումով Ցեղասպանութեան հարցը գիտական մակարդակում ներկայացնելու համար կարիք ունենք համալսարանների համագործակցութեանը: Համոզուած ենք, որ այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհն ամբողջութեամբ չի ճանաչել եւ չի դատապարտել Հայոց ցեղասպանութիւնը՝ շարունակելու են անարդարութիւններն ու պատերազմները»: Սրբազան Հայրն իր արտայայտութիւնների աւարտին դատապարտելով Իսրայէլի պետութեան ոճրագործութիւնները Գազայում եւ Պաղեստինի անմեղ ժողովրդի կոտորածները, այն որակեց ցեղասպանութիւն:

Հանդիպման ընթացքում արտայայտուեցին նաեւ Օտար լեզուների եւ Միջազգային յարաբերութիւնների կապի գրասենեակի տնօրէնները, ովքեր շեշտեցին Սպահանի պետական համալսարանի եւ Առաջնորդարանի փոխհամագործակցութեան կարեւորութիւնը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՍ

Կիրակի՝ յուլիսի 27-ին, Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնի առիթով Փերիա գաւառի Բոլորան գիւղի Ս. Ղուկաս եկեղեցում ձեռամբ Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցու նախկին հովիւ, Ա.Մ.Ն.-ից ժամանած արժն. Տ. Կոմիտաս քհնյ. Թորոսեանի Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց:

Արարողութեանը ներկայ էին արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի փոխատենապետ պրն. Մկրտիչ Աւետումեանը, Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանը եւ բարեպաշտ հայորդիներ: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Պատարագիչ քահանայ հայրն օրուայ խորհրդի առնչութեամբ իր քարոզում անդրադառնալով Քրիստոսի պայծառակերպութեանը՝ այն լաւագոյն առիթ համարեց, որպէսզի իւրաքանչիւր հաւատացեալ իր հոգուց հեռացնի չարը եւ Սատանայի կողմից սերմանած դառնութիւնը, իսկ փոխարէնն իր կեանքը լցնի Քրիստոսի սիրով ու հաւատով: Նա ներկաներին յորդորեց իրենց մէջ զարգացնելով բարութիւնը, սիրալիր վերաբերմունք ցուցաբերել միմեանց նկատմամբ:

Յատկանշական է, որ նոյն առիթով Ս. եւ անմահ Պատարագ մատուցեց նաեւ Նոր Ջուղայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում՝ ձեռամբ արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի:

î úÜª ê¡ ²êîô² Ì ² ÌÜÆ ì °ð² öàÊØ²Ü

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԽՈՅԳԱՆ ԳԻՒՂԻ Ս. ԱՍՏՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Ուրբաթ՝ 2014 թւականի օգոստոսի 15-ի առաւօտեան Փերիա գաւառի Խոյգան գիւղի Ս. Աստուածածին եկեղեցում տեղի ունեցաւ Ս. եւ անմահ Պատարագ Ս. Աստուածածնի վերափոխման տօնի առթիւ: Ուխտաւոր հաւատացեալները Նոր Ջուղայից, Շահինշահրից եւ Թեհրանից ժամանել էին Խոյգան, մասնակցելու արարողութեանը:

Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս Զարեանը, ընկերակցութեամբ թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի փոխ-ատենապետ պրն. Մուկուչ Աւետումեանի եւ Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդավերդեանի, ժամանեց Խոյգան գիւղի Ս. Աստածածին եկեղեցի, որոնց պաշտօնապէս դիմաւորեցին եկեղեցու վարչութիւնը եւ ուխտաւոր հաւատացեալները, ապա կանոնական աղ ու հացի օրհնութիւնից յետոյ մուտք գործեցին եկեղեցի: Ս. եւ անմահ Պատարագի արարողութիւնը նախագահեց Սրբազան Հայրը, պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, իսկ երգեցողութիւնը կատարեցին Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախմբի ծիսական խմբի անդամուհիները:

Ս. Պատարագի ընթացքում առաջնորդ Սրբազան Հայրն օրհնեց առթիւ իր պատգամը փոխանցեց ներկաներին՝ կարեւորութեամբ անդրադառնալով Ս. Կոյս Մարիամի ծննդեան, յաւերժ կուսութեան, Աստուածամայր լինելու ճշմարտութեան եւ երկինք փոխադրուելու հիմնական կէտերին: Ապա ողջունեց ուխտաւորներին եւ գնահատեց նրանց ներկայութիւնը: Թեմական առաջնորդն իր ողջոյնի եւ գնահատանքի խօսքն ուղղեց նաեւ Եկեղեցեաց վարչութեանը եւ տեղի բնակիչներին:

Ս. Պատարագի աւարտին, առաջնորդ Սրբազան Հօր նախագահութեամբ տեղի ունեցաւ աւանդական Խաղողօրհնէքի արարողութիւնը:

Ս. Պատարագից անմիջապէս յետոյ, եկեղեցու շրջափակում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ հաւատացեալները հաղորդ դառնալով օրհնեալ խորհրդին, օրհնուած խաղողից առնելով՝ տուն վերադարձան:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Կիրակի՝ օգոստոսի 17-ի առաւօտեան, հանդիսաւորութեամբ նշուեց Հայոց եկեղեցու հինգ տաղաւար տօներից՝ Ս. կոյս Մարիամ Աստուածածնի վերափոխման տօնը: Սուրբ եւ անմահ Պատարագներ տեղի ունեցան Նոր Ջուղայի երեք եկեղեցիներում: Ս. Ստեփանոս եկեղեցում, որտեղ երգեցողութիւնը խմբավար Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ կատարում էր Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախումբը, պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը: Ս. Մինաս եկեղեցում Ս. Պատարագ մատուցեց եւ հաւատացեալ ներկաներին իր պատգամը փոխանցեց արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը: Իսկ Ս. Աստուածածին եկեղեցում, պատարագեց արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանը:

Ս. Աստուածածին եկեղեցու Ս. Պատարագին, որը նաեւ նոյն եկեղեցու անուանակոչութեան տօնն էր, նախագահեց Սպահանի հայոց թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարութեամբ՝ խմբավար Արմէն Ամիրխանեանի:

Յընթացս Ս. Պատարագի Առաջնորդ Սրբազան Հայրն իր հայրական

Շարունակութիւնը՝ 10-րդ էջում

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ՍՐԱՀԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի միջոցով, վերջին տարիներում Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութիւնում, բացի շինարարական աշխատանքներից իրագործել են մի շարք նորոգութիւններ, որոնցից մէկը հանդիսութիւնների սրահի եւ յարակից բաժինների նորոգութիւնն ու արդի հնարաւորութիւններով եւ սարքաւորումներով օժտելն է:

Վերանորոգուած սրահի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ երեքշաբթի՝ յուլիսի 8-ի երեկոյեան, գլխաւորութեամբ Թեմական Առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ ներկայութեամբ ազգային մարմինների, միութեան Կենտրոնական վարչութեան ու միաւորների վարչութիւնների ներկայացուցիչների եւ համայնքիս անդամների: Նախ Սրբազան Հայրը պահպանիչ աղօթքով օրհնեց սրահը, ապա ժապաւէնի հատումով կատարեց սրահի բացումը, որից յետոյ Թեմական Խորհրդի անունից արտայայտուեց Խորհրդի ատենապետ՝ Նոէլ Մինասեանը: Նա իր ուրախութիւնը յայտնելով «Արարատ» միութեան հնարաւորութիւնները բարելաւելու կապակցութեամբ, շեշտեց համայնքում ապրող ժողովրդի համար արդիական կենտրոնատեղի ունենալու կարեւորութիւնը եւ յայտնեց, որ նման աշխատանքները գալիս են ապացուցելու, որ հակառակ բոլոր դժուարութիւնների, մեր համայնքն աշխոյժ է ու կենսունակ: Նա իր գնահատանքի խօսքն ուղղեց շինարարական յանձնախմբի անդամներ՝ Վազգէն Թահմազեանին, Վարուժ Մինասեանին եւ Սիփան Ղազարեանին, ինչպէս նաեւ շինարարական աշխատանքների պատասխանատու՝ Փաւէլ Օսիփոֆին, որոնք բծախնդրօրէն եւ ճշտապահութեամբ, նախատեսուած ժամկէտին իր աւարտին հասցրին գործը: Պրն. Մինասեանը նաեւ ողջունելի համարեց ազգային մարմինների ու միութեան Կենտրոնական վարչութեան անդամների համագործակցութեան ոգին, որի շնորհիւ հնարաւոր դարձաւ իրականացնել այս նախագիծը:

Սրբազան Հայրը եւս իր հերթին իր շնորհաւորանքներն ու գնահատանքի խօսքը փոխանցեց պատասխանատու մարմիններին եւ անձանց սրահի վերանորոգման գործը լաւագոյնս կատարելու առթիւ: Սրբազան հայրը համայնքային հարստութիւնը արժեւորելու կոչ անելով ներկաներին, անհրաժեշտ նկատեց միասնաբար հզօրացնել ու բարգաւաճեցնել համայնքը. նա յոյս յայտնեց, որ այս սրահում լինելու են հարսանիքներ, մկրտութեան հանդիսութիւններ ու մշակութային զանազան միջոցառումներ: Սրբազան Հայրն օրհնանքի խօսքերով աւարտեց իր ելոյթը, ապա ներկաները այցելեցին նորոգուած բաժինները:

Վերջում միութեան Երէցների միաւորի միջոցով տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

ÈÆê´àÜÆ ÐÆÜ¶ Ø²ðîÆÎÜºðÆ ÚÆÞ²î²ÎÆÜ ÜôÆðô²Ì 24-ð¸ üàôî´àÈÆ Ê²Ôºð

Նախաձեռնութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի եւ համագործակցութեամբ միութեան ֆուտբոլի յանձնախմբի, թւականիս օգոստոսի 2-ից 8-ը, միութեան մարզական բաժնում տեղի ունեցաւ ֆուտբոլի մրցաշար՝ նուիրուած Լիսբոնի հինգ անձնազոհ մարտիկների հերոսական անձնազոհութեան 31-ամեակին:

Մրցաշարի բացման հանդիսաւոր արարողութիւնը մեկնարկեց Անի Ղազարեանի ողջոյնի եւ բացման խօսքերով, ապա աւագ խմբապետ Ռոբերտ Սիմոնեանի հրահանգով՝ դրօշակագարդի ուղեկցութեամբ տեղի ունեցաւ շքերթ, որի մասնակիցները կրում էին հինգ անձնազոհ մարտիկների պատկերները: Միջոցառման ներկաները մէկ րոպէ յոտընկայս լռութեամբ յարգեցին նահատակ մարտիկների յիշատակը, որին յաջորդեց Վանիա Պետրոսեան միջոցով Սկաուտական միաւորի խօսքի ընթերցումը: Խօսքի մէջ ասուած էր. «*Երեսուն-մէկ տարիներ են անցել* 1983 *թ. յուլիսի* 27*-ից, սակայն այսօր եւս հինգ քաջարի մարտիկների սխրագործութիւնը նոր պատգամ է փոխանցում. պատգամ՝ ուղղուած Թուրքիայի իշխանութեանը՝ ընդունելու Հայոց ցեղասպանութեան իրողութիւնն ու վերականգնել արդարութիւնը, պատգամ՝ ուղղուած հայ երիտասարդութեանը՝ պահել ազգային դիմագիծն ու դառնալ պահանջատէր եւ մարտունակ, պատգամ՝ ուղղուած հայ ազգին՝ պահանջատիրական պայքարի մէջ մնալ միասնական ու անգիջող եւ սատարել հայրենիքի վերելքին։ Այժմ պահանջատիրական համահայկական մեր երթն ուղղուած է դէպի Ցեղասպանութեան* 100*-ամեակ եւ պայքարը նոյն թափով ու վճռականութեամբ պիտի շարունակենք, մինչեւ Հայ դատի արդարացի լուծումն ու ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստանի կերտումը*»:

Խաղերի գնդակը օրհնելու համար հրաւիրուեց Տ. Մեսրոպ աւագ քհնյ. Գալստանեանը: Նա եւս անդրադառնալով հինգ հերոսների քաջագործութեանը ասաց. «*Մրցութեան մէջ լինում են յաղթողներ եւ պարտուողներ, սակայն այս պարագային դա էական չէ. կարեւորն այն է, որ այս մրցաշարով եւ մեր ներկայութեամբ յարգում ենք հինգ մարտիկների յիշատակը, եւ մեր երախտագիտութիւնն ենք յայտնում ոչ միայն այս նահատակներին, այլ նաեւ բոլոր այն հերոսներին, ովքեր իրենց կեանքը նուիրեցին յանուն հայրենիքի եւ Հայ դատի արդար լուծման*»:

Քահանայ Հայրն իր խօսքի աւարտին որպէս՝ այս սուրբ գաղափարին նուիրուած խաղերի մեկնարկ՝ ներկաներին հրաւիրեց միասնական աղօթքով մասնակից դառնալ գնդակի եւ խաղերի օրհնելու արարողութեանը:

Հնգօրեայ մրցաշարի ընթացքում մրցադաշտ իջան համայնքի երիտասարդներից կազմուած՝ «Արարատ», «Արցախ», «Ախթամար», «Լիսբոն», «Սարդարապատ» եւ «Ռաֆֆի» խմբերը:

Եզրափակիչ փուլում մրցակցեցին «Արարատ» եւ «Արցախ» խմբերը: Խաղը 1-1 հաշուով աւարտուեց ոչ ոքի, սակայն 11-մետրանոց հարուածների արդիւնքում 5-4 հաշուով մրցադաշտից յաղթող դուրս եկաւ «Արարատ» խումբը, իսկ երկրորդ տեղը զբաղեցրեց «Արցախ» խումբը:

Նշելի է, որ մրցավարութիւնը սիրայօժար կերպով ստանձնել էին՝ Ռուբիկ Պարսամեանը, Ռազմիկ Նազարեանը, Մելքոն Քեշիշեանը եւ Արին Խաչիկեանը, իսկ Կազմակերպիչ յանձնախումբը ներկայացնում էին՝ Մասիս Սիրջանեանը, Սեպուհ Վարդանեանը, Մանիա Բէգիջանեանը, Թադէ Ղարիբեանը, Անի Ղազարեանը, Սասուն Սիմոնեանը, Արայիկ Սիմոնեանը, Էմանուէլ Սիրջանեանը եւ Ռոմիկ Թահմազեանը:

Թող յաւերժ վառ մնայ Լիսբոնի հինգ հերոսների յիշատակը:

Շարունակութիւն 7-րդ էջից

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՁՈՒՂԱՅՈՒՄ

պատգամն ուղղեց ժողովրդին, ընդ որում հակիրճ կերպով անդրադառնալով Աստուածամայր Ս. Կոյս Մարիամի կեանքին ու կենցաղին, որպէս մայրութեան տիպար, ընդգծեց նրա նկատմամբ հայ ժողովրդի տածած սէրն ու յարգանքը եւ յորդորեց բոլոր հաւատացեալներին՝ իրենց կեանքի ամբողջ ընթացքում հաւատով եւ յոյսով դիմեն Ս. Տիրամօրը՝ վստահ լինելով, որ նա բարեխօս եւ միջնորդ է իր Միածին Որդու եւ մարդկութեան միջեւ:

Գերշ. Սրբազան Հայրն իր պատգամի մէջ նաեւ շնորհաւորելով Ս. Աստուածածին եկեղեցու անուանակոչութեան տօնի կապակցութեամբ, շեշտեց, որ հայ հաւատացեալը դարեր շարունակ իր եկեղեցիներում ի մի գալով եւ աղօթելով՝ առաւել ամրապնդել եւ զօրացրել է իր քրիստոնէական հաւատն ու նուիրումը, որով իր կեանքը դարձրել է առաւել լեցուն:

Առաջնորդ Սրբազան Հայրը խօսելով Խաղողօրհնէքի աւանդական արարողութեան մասին՝ ասաց, որ խաղողը, իբրեւ պտուղների ազնուագոյնը, որի հիւթից ստացւում է գինին, եւ որը եկեղեցում, Ս. Պատարագի ընթացքում գոյափոխւում է Քրիստոսի Ս. Արեան, իբրեւ երախտիք եւ նուէր ընծայւում է եկեղեցուն, եւ հաւատում ենք, որ այն օրհնելով նաեւ առատութիւն է լինելու Աստծու բոլոր բարիքների վրայ:

Սուրբ եւ անմահ Պատարագին յաջորդեց աւանդական Խաղողօրհնէքի արարողութիւնը: Բարեպաշտ ժողովրդի միջոցով եկեղեցի բերուած խաղողն օրհնեց թեմական Առաջնորդի ձեռամբ, որից յետոյ այն բաժանուեց ներկաներին:

ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Այս տարի զուգադիպում է Սպահանի հայոց թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի քահանայական օծման 30-ամեակին, իսկ Սպահանի հայոց թեմում որպէս առաջնորդ ծառայութեան 10-ամեակին: Առ այդ, հովանաւորութեամբ Շահինշահրի համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի եւ կազմակերպութեամբ Հայ համայնքի վարչութեան, երեքշաբթի՝ 2014 թւականի յուլիսի 15-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահրի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ յոբելենական հանդիսութիւն:

Սոյն հանդիսութեանը ներկայ էին յոբելեար թեմական առաջնորդը, Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների, անձնակազմերի եւ միութիւնների ներկայացուցիչները, հրաւիրեալներ ու համայնքի մեծ թիւով անդամներ, որոնք եկել էին մեծարելու առաջնորդ Սրբազան Հօրը:

«Սրբափայլ տաճարի առջեւ, սրբաչունչ պատանին՝
Սրբահառաչ աղօթքն ուղղած Սուրբին,
Սրբամիտ ուխտում է՝ լինել սրբապահ՝
Սուրբի ճանապարհին։
Հրաժեշտ տւած աշխարհիկ կեանքին,
Անցնում է փորձութեան բովից յաղթական,
Շնորհաբաշխւում կաթիլ առ կաթիլ՝
Սրբակցորդ դառնում մինչեւ յաւիտեան։
Եւ ահա անցած երեք տասնամեակ՝
Բազմած առաջնորդ գահին թեմական,
Լոյսը սփռում է Սպահանի թեմին՝
Անունն է Տ. Բաբգէն եպիսկոպոս Զարեան»։

Վերոնշեալ բանաստեղծական տողերը ձօնելով թեմական առաջնորդին՝ օրւայ հանդիսավար Վիոլեթ Յարութիւնեանը բարի գալուստ մաղթեց ներկաներին եւ շնորհաւորանքի խօսք ուղղելով գերշ. Սրբազան Հօրը, նրան մաղթեց քաջառողջութիւն եւ արեւշատութիւն:

Այնուհետեւ ցուցադրուեց Աստծու նուիրեալ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի կենսագրականը սեղմ գծերով ներկայացնող տեսագրութիւնը, որը պատրաստուել էր հոգշ. Հայր Սուրբի նախաձեռնութեամբ: Հետաքրքիր տեսագրութեանն աւելի լիցք հաղորդեցին Նոր Ջուղայի եւ Շահինշահրի ազգային մարմինների եւ միութիւնների պատասխանատուների, պաշտօնեաների եւ ներկայացուցիչների վկայութիւններն ու դրուատանքի խօսքերը թեմական առաջնորդի վեհ նկարագրի ու ծաւալած եկեղեցաշէն գործունէութեան վերաբերեալ:

Ծրագրի շարունակութեան մէջ բեմ հրաւիրուեց Համայնքի վարչութեան ատենապետ պրն. Մելքոն Շիրուանեանը՝ արտայայտուելու գերշ. Սրբազան Հօր վսեմաշուք անհատականութեան եւ ծառայանուէր գործունէութեան մասին: Յարգելի բանախօսը բարձր գնահատելով Հայոց առաքելական սուրբ եկեղեցու դերը՝ հայ ժողովրդին գլխաւորելու եւ համախմբելու կարեւոր գործում, դրուատեց նոյն եկեղեցու մէջ դաստիարակուած ու թրծուած հոգեւորականներին եւ նշեց. «*Անկասկած Տ. Բաբգէն եպս. Զարեանը մէկն է այն հոգեւորականներից, որը 30 տարի անընդմէջ ծառայել է հայ եկեղեցուն ու մեր ժողովրդին, ընդ որում՝ վերջին 10 տարին մեր թեմում: Սրբազան Հայրը յատկապէս իր համեստութեամբ ու բարեհամբոյր բնաւորութեամբ եւ իր նպատակաուղղուածութեամբ կարողացաւ կարճ ժամանակահատուածում լայն ժողովրդականութիւն ձեռք բերել: Իբրեւ թեմիս առաջնորդ իր կեցուածքով ու դիրքորոշումով բարձրացրեց մեր եկեղեցու եւ մեր թեմի ազգային իշխանութեան վարկն ու հեղինակութիւնը թէ՛ համահայկական, թէ՛ պետական շրջանակներում, եւ ինչու չէ նաեւ միջազգային մակարդակում: Իսկ կարեւորութեամբ պէտք է մատնանշել այն իրողութիւնը, որ Սրբազան Հօր 10-ամեայ եկեղեցաշէն գործունէութեան ընթացքում, յատուկ ուշադրութեան արժանացաւ Շահինշահրի հայ համայնքը, որի հետեւանքով էլ նւաճում ապրեց տեղի ազգային-հասարակական կեանքը*»: Իր խօսքի աւարտին պրն. Շիրուանեանը Սրբազան Հօրը մաղթեց արեւշատութիւն, քաջառողջութիւն եւ նորանոր նւաճումներ:

Օրուայ գեղեցիկ հանդիսութեանը առանձնայատուկ փայլ տուեց թեմական առաջնորդին ձօնուած՝ հոգշ. Հայր Սուրբի ղեկավարութեամբ կազմակերպուած «Նարօտ» մանկա-պատանեական երգչախմբի գեղարուեստական ծրագիրը, որն արժանացաւ հանդիսատեսի բարձր գնահատանքին:

Գեղարուեստական յայտագրում ընթերցուեց նաեւ ստորեւ բերուած «Բաբգէն Սրբազան» բանաստեղծութիւնը, որի հեղինակն էր հոգշ. Հայր Սուրբը.

«Բարգէն Սրբազան,
Բիւրեղեայ քաղցր հոգով ու բարի սրտով
Առաջնորդը մեր, հայրութեան վեհ նկարագրով,
Բարձր մտքի տէր, բայց մանուկի անմեղ հոգով,
Գուրգուրոտ հօր մաքուր ու թափանցիկ հայելիով,
Է ու կը մնայ Սրբազանը մեր, մեզ սփոփող,
Նուիրեալ ծառայ եկեղեցւոյ եւ աւանդութեան
Սրբազանն է մեր՝ օրինակ սիրոյ առաքինութեան,
Բենական քաղցր, հեզ ու վեհ բարութեան
Բարի օրինակն է մեզ ու բոլոր մարդկութեան.
Արի կանգնած, դէմը ժողովրդի բոլոր դժուարութեան
Զմրուխտեայ առաքինութեան ռահվիրայ է, հարազատ.
Նա է՝ Բարգէն Սրբազան մարդը եւ հայրը,
Նուիրեալ մեր սիրելի առաջնորդ Սրբազանը»։

Սոյն օրեայ առթիւ համայնքի հայորդիներն ի նշան երախտագիտութեան գերշ. Սրբազան Հօր հայրական անկեղծ սիրոյ ու հանապազօրեայ հովանաւորութեան, պատրաստել էին մի գեղեցիկ յուշանուէր, որը հոգշ. Հայր Սուրբի ձեռամբ եւ Համայնքի վարչութեան ատենապետի միջոցով յանձնուեց թեմական առաջնորդին:

Հոգշ. Հայր Սուրբն իր բարեմաղթանքի խօսքն ուղղելով գերշ. Սրբազան Հօրը, այսպէս արտայայտուեց.

«Որպէս Հայոց առաքելական սուրբ եկեղեցու անսակարկ նուիրեալ, Տ. Բարգէն եպս. Զարեանը մեզ համար եղել է դաստիարակ ու սերտ գործակից, տիպար հոգեւորական, համեստ եւ անբասիր սպասաւոր։ Սրբազան Հայրն իր սիրալիր վերաբերմունքով ինձ համար եղել է ուղեցոյց եւ մեծ խորհրդատու։ Նա իր հոգածու մօտեցումով կարողացաւ նւաճել Սպահանի հայոց թեմի գաւակների սրտերն ու վայելել նրանց սէրն ու յարգանքը։ Ահաւասիկ իմ գոհունակութիւնն ու շնորհակալութիւնն եմ յայտնում Տիրոջը, որ Սրբազան Հօր նման վառ անհատականութիւն է առաջնորդում Սպահանի հայոց թեմը։ Բարձրեալից հայցում եմ Սրբազան Հօրը արեւշատ օրեր ու առաւել բեղուն գործունէութիւն իր նուիրական ասպարէզում։ Թո՛ղ ամենակալ Աստծու շնորհը միշտ անպակաս լինի Սրբազան Հօրից»։

Յուզառատ էր պահը, երբ Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնելով հանդիսութեան նախաձեռ-

նողներին ու կազմակերպիչներին իր սրտի խօսքը փոխանցեց. «*Հիացած եմ կազմակերպւած այս գեղեցիկ անակնկալի համար, բոլորի վարձքները կատար, թէ՛ նախաձեռնողների, թէ՛ կազմակերպիչների եւ թէ՛բոլոր այն անձանց, ովքեր որեւէ կերպ դերակատար են եղել այս հանդիսութիւնն իրագործելու մէջ։ Բարձրեալին, սրտի անհուն ուրախութեամբ, իմ գոհունակութիւնն եմ յայտնում, որ ինձ արժանացրել է թեմիս գաւակների անկեղծ սէրը վայելելու։ Այս օրը ինձ համար մեծ պատիւ է։ Շնորհակալ եմ ցուցաբերած այս սիրոյ եւ յարգանքի համար։ Երբ կը կրեմ այս գեղեցիկ յուշանուէրը, անշուշտ կը յիշեմ այս օրն ու Շահինշահրի սիրալիր գաւակներին։ Դուք ինչպէս միշտ իմ աղօթքներում Ձեր ուրոյն տեղը կունենաք։ Աստուած թո՛ղ օրհնի Ձեզ։ Իսկ մենք հոգեւորականներս կանչւել ենք առաքելութեան, կանչւել ենք ծառայութեան Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցուն։ Ուրախ եմ, որ Աստծու զօրակցութեամբ կարողացել եմ պահել իմ ուխտը նրա հետ՝ ի փառս Հայոց եկեղեցու եւ Թեմիս ողջ գաւակների բարօրութեան։ Թող Տէրը անսասան պահի Հայոց եկեղեցին եւ նրա զինւորեալներին ու կանչւած ծառաներին*»։

Այնուհետեւ օրւայ առիթով պատրաստւած կարկանդակը մատուցւեց, որին յաջորդեց ջերմ ու համեստ ընդունելութիւն բոլոր հանդիսականների համար։ Ստեղծւած հարազատ մթնոլորտում Սրբազան Հայրն ընդունեց ներկաների անհատական բարեմաղթանքները եւ լուսանկարւեց նրանց հետ՝ այդ շքեղ օրը յաւերժացնելով նրանց համար։

Այս անզուգական հանդիսութիւնն իրականացաւ հոգշ. Հայր Սուրբի, համադրող յանձնախմբի անդամներ՝ տիկնայք Ծաղկուշ Մինասքանեանի, Մարիտա Վարդանեանի, Լիդուշ Քամարզարեանի, Սիլւա Քոնարեքիի եւ Ալիս Մկրտչեանի, ձայնի պատասխանատու պրն. Անդրէ Պարսամեանի, տեսագրման եւ նկարահանման պատասխանատու՝ պրն. Գեւիկ Խաչատրեանի միահամուռ ջանքերի շնորհիւ։

ö ºðÆàÚ Îð Â ²êÆð²ò ØÆàôÂ º²Ü ÐÆØÜ² ¸ðØ²Ü ºô ¶àð Ì àôÜ¾àôÂ º²Ü
85-²Ø º²ÎÆÜ Üôƒðô² Ì ØÆæà ò² è àôØÜ ºð³ Üàð æàôÔ²ÚàôØ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Փերիոյ կրթասիրաց միութեան 85-ամեակին նուիրուած ձեռնարկների շարանում, կիրակի՝ օգոստոսի 10-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցում, յետ-կիրակնօրեայ Ս. Պատարագի արարողութեան, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ մասնակցութեամբ քահանայից ու դպրաց դասերի, տեղի ունեցաւ Հոգեհանգստեան պաշտօն՝ ի յիշատակ միութեան հիմնադիրների եւ ննջեցեալ միութենականների:

Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ, «Քանանեան» դպրոցի նախկին շէնքում, գերշ. Սրբազան Հօր եւ Փերիոյ կրթասիրաց միութեան Կենտրոնական վարչութեան նախագահ Հայկ Հայրապետեանի միջոցով պաշտօնական բացումը կատարուեց կազմակերպուած ցուցահանդէսի:

Թեմական առաջնորդը նախքան ցուցասրահի մուտքի ժապաւէնի հատումը կարեւորութեամբ նշեց, որ չպէտք է անցեալից եւ մեր արմատներից կտրուել, սակայն անցեալի մէջ մնալու փոխարէն պէտք է դրանից ուժ եւ դաս առնել ու ապրել ներկան՝ ապագան կերտելու համար:

Ցուցահանդէսի պաշտօնական բացումից յետոյ ներկաներն առիթ ունեցան մօտիկից տեսնելու սրահում յատուկ դասաւորութեամբ ցուցադրուած իրերը, որոնց շարքում ուշագրաւ էին յատկապէս Փերիա գաւառի հայ բնակչութեան կենցաղային իրերը, տարազները, տոհամածառերը եւ լուանկարները: Ցուցադրուել էին նաեւ միութեան 85-ամեայ բեղուն գործունէութեանն առնչուող լուսանկարներ:

ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

2014 թւականի օգոստոսի 14-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Ն. Ջ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում, տեղի ունեցաւ Փերիոյ կրթասիրաց միութեան հիմնադրութեան եւ գործունէութեան 85-ամեակի յոբելենական հանդիսութիւնը: Ծրագրին ներկայ էին թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, Իրանի իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, ազգային իշխանութեան անդամները, միութենականներ եւ հրաւիրեալ անձինք:

Ծրագիրն սկիզբ առաւ օրհնեալ հաղորդավար Թովմա Գալստանեանի բացման խօսքով, որտեղ նա անդրադարձաւ միութեան հիմնադրութեանը եւ ծաւալած գործունէութեանը: Ապա բեմ հրաւիրեց առաջնորդ Սրբազան Հօրը՝ ընթերցելու Մեծի Տանն Կիլիկիոյ արժանաւոր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոս Հայրապետի սրբատառ կոնդակը, որը շնորհել էր միութեան 85-ամեայ յոբելեանի առթիւ:

Վեհափառ Հայրապետի օրհնութեան գրի ընթերցումից յետոյ, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանը արտայայտուեց Թեմի կենսունակութեան եւ ազգային-մշակութային ոլորտների զարգացման գործում միութիւնների դերակատարութեան մասին եւ բարձր գնահատեց նրանց վաստակն ու աշխատունակութիւնը:

Ծրագրի շարունակութեան մէջ բեմը տրամադրուեց արուեստի գեղեցիկ համարների ներկայացումներին: Սկզբում Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ եւ դաշնամուրի նուագակցութեամբ, Արսինէ Ալեքսանդրեանի երգեցողութեամբ, եւ Յովիկ Բաղումեանի՝ ջութակի նուագակցութեամբ, հանդիսատեսին մատուցեցին ժողովրդական երգ-երաժշտութեան եօթ հա-

մարներ: Նրանցից առաջինը՝ «Անմահ երգիչ Սայաթ Նովային» խորագրով երգը, երաժշտութեան հեղինակ՝ Համիկ Ալեքսանդրեանի կողմից նուիրուեց երգի բառերի հեղինակ, Փերիոյ կրթասիրաց միութեան վաստակաշատ անդամ եւ երկար տարիների վարչութեան նախագահ հանգուցեալ Լեւոն Մինասեանի վառ յիշատակին:

Փերիոյ կրթասիրաց միութեան «Էրեբունի» պարախումբը, Ալինա Գրիգորեանի ղեկավարութեամբ, ներկայացրեց պարային գեղեցիկ կատարումներ, որոնք ընդմիջուեցին Սոնիա Դիլանչեանի եւ Մարտունի Խաչիկեանի ասմունքներով: Ընթացքում ընթերցուեցին 85-ամեայ յոբելեանի առթիւ զանազան միութիւնների վարչութիւններից եւ անձերից ստացուած ուղերձներից ոգեշնչող հատուածներ:

Ծրագրի գեղարուեստական բաժնի աւարտը հանդիսացաւ Արբի Բաբումեանի ղեկավարած «Արփա» նուագախմբի ելոյթը. խումբը ներկայացրեց երաժշտական 8 համարներ, որին երգերով ընկերակցեց մեներգչուհի Բեթինա Յովսէփեանը:

Բեմային ծրագրին յաջորդեց միութեան վարչութեան եւ 85-ամեակի յոբելենական հանդիսութեան կազմակերպիչ յանձնախմբի խօսքը, որն ընթերցեց Հրանուշ Հայրապետեանը:

Յաջորդիւ տեղի ունեցաւ Փերիոյ կրթասիրաց միութեան հիմնադրութեան եւ գործունէութեան 85 տարիների մասին միութեան վարչութեան նախագահ Հայկ Հայրապետեանի պատրաստած հատորի գիւնեձօնը գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, Հայկ Հայարպետեանի եւ 85-ամեակի յոբելենական հանդիսութեան կազմակերպիչ յանձնախմբի նախագահ Վարուժան Բաղումեանի միջոցով: Ապա 85-ամեակի առթիւ պատրաստուած կարկանդակը հատուեց միութեան եւ կազմակերպիչ յանձնախմբի նախագահների ու միութեան կրտսերագոյն եւ երիցագոյն անդամների միջոցով, որից յետոյ, միութեան երիցագոյն անդամուհի՝ Մերի Մելիքեանը, իր եղբօր՝ Մարտիրոս Դաւթեանի գրչին պատկանող «Մատաղ հայ սերնդին» բանաստեղծութիւնն արտասանեց գեղեցիկ կերպով:

Յոբելենական հանդիսութեան պաշտօնական բաժնի փակումը եղաւ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի գնահատանքի եւ քաջալերանքի ոգեւորիչ խօսքերը: Նա իր հայրական պատգամում դրուատեց միութեան վաստակն ու գործունէութիւնը եւ ուժ ու կորով մաղթեց անդամներին՝ շարունակելու նուիրական ծառայութիւնը:

Զեռնարկի պաշտօնական բաժնից յետոյ, առաջնորդ Սրբազան Հօր միջոցով օրհնուեց ընթրիքի սեղանը եւ բոլոր ներկաները սիրոյ սեղանի շուրջ վայելեցին միութեան եւ կազմակերպիչ յանձնախմբի կողմից պատրաստուած համադամ ճաշատեսակները:

Ü.æ. Ð²ÚàôÐº²ò ´²ðº¶àð Ì²Î²Ü ÀÜÎºðàôÂº²Ü Òº è²ðôº êîÆ òàôò²Ð²Ü¸¾ê-ì²Ö²èø

Նախաձեռնութեամբ Նոր Ջուղայի Հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութեան, 23 օգոստոս 2014 թւականի առաւօտեան, Ս. Ամենափրկչեան վանքի ցուցասրահում տեղի ունեցաւ Ընկերութեան նախաձեռնութեամբ ամենամեայ կարգով անցկացուող բարեգործական ցուցահանդէս-վաճառքի բացման արարողութիւնը, ձեռամբ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի, ներկայութեամբ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ատենապետ՝ պրն. Արշալոյս Խուդաւերդեանի եւ Ընկերութեան անդամուհիների:

Սոյն ցուցահանդէս-վաճառքն առիթ է հանդիսանում Ս.Ա. վանք այցելող պարսիկ եւ օտարերկրացի այցելուներին ծանօթացնելու հայկական մշակոյթը եւ յատկապէս ձեռարուեստի ոլորտում հայ կանանց իւրօրինակ ընդունակութիւններին:

Մինչեւ 6 սեպտեմբեր 2014 թւականը տեւող այս ցուցահանդէս-վաճառքի ամբողջ հասոյթը ծառայելու է բարեգործական նպատակների:

ՎԱՀԻԿ ԹՈՐՈՍԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ «ՖՈՒՏԲՈԼ, ԻՄ ԿԵԱՆՔԸ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

Ուրբաթ՝ օգոստոսի 1-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Նոր Ջուղայի Հայոց ազգային կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում տեղի ունեցաւ տարիների ֆուտբոլիստ եւ մարզիչ, իսկ այժմ «Գիթի փասանդ» ֆուտբոլի խմբի գլխաւոր մարզիչ Վահիկ Թորոսեանի կեանքին եւ գործունէութեանն անդրադարձող «Ֆուտբոլ, իմ կեանքը» գրքի շնորհանդէսը, որին հրաւիրուել եւ ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչները, Սպահանի քաղխորհրդի անդամ պրն. Զազինին, Սպահանի քաղաքապետարանի մարզանքի բաժանմունքի տնօրէն պրն. Քառիմին, «Գիթի փասանդ» մարզա-մշակութային ակումբի տնօրէն պրն. Թահեռին եւ փոխտնօրէն պրն. Առաղիզադէն ու մի շարք այլ հրաւիրեալներ:

Գրքի հեղինակ Հուման Դանայանն իր աշխատանքի առաջին բաժնում փորձելով պարսիկ ընթերցողին առաւել ծանօթացնել հայ ժողովրդի հոգեբանութեանը, աւանդոյթներին, լեզուին եւ մշակոյթին՝ հակիրճ ներկայացրել է հայոց պատմութեան տարբեր հանգրուանները, իսկ երկրորդ բաժնում անդրադարձել է երկրի առաջատար ֆուտբոլիստներից Վահիկ Թորոսեանի կենսագրականին, ով 13 տարեկան հասակից անդամակցելով հայկական եւ պարսկական տարբեր խմբերին յաջողել է փայլել երկրի ֆուտբոլի ամենացածր մինչեւ ամենաբարձր մակարդակներում:

Վահիկ Թորոսեանը ծնուել է իրանական 1346 թւականին եւ երկար տարիներ լինելով Սպահանի «Փոլի աքրիլ» խմբի աւագ անդամ, բազմաթիւ յաջողութիւններ է արձանագրել յատկապէս սոյն խմբի հետ երկրի մակարդակի լիգայում: Նա տարիներ զբաղեցրել է նաեւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան ու «Սեւան» ֆուտբոլի խմբերի գլխաւոր մարզիչի պաշտօնը եւ ներկայիս որպէս «Գիթի փասանդ» խմբի գլխաւոր մարզիչ շարունակում է իր գործունէութիւնը՝ մարզական ասպարէզում:

«Ֆուտբոլ, իմ կեանքը» գրքի շնորհանդէսի ծրագրում, որի հաղորդավարութիւնը վստահուած էր Թալին Մովսիսեանին, նախ ելոյթ ունեցաւ գրքի հեղինակը՝ հայոց ազգային «Կատարինեան» դպրոցի պարսկերէն գրականութեան տարիների ուսուցիչ եւ հայ մշակոյթի,

լեզուի, ինչու չէ նաեւ Հայոց ցեղասպանութեան թեմաներով բազմաթիւ յօդուածների հեղինակ Հուման Դանայանը, ով իր խօսքում սոյն աշխատանքի իրականացման նպատակներն այսպէս թուարկեց՝ պարսկալեզու հայրենակիցներին Վահիկ Թորոսեանին եւ գրքում նշուած միւս հայ մարզիկներին ճանաչեցնելը, նոր սերնդի համար ջանասիրութեան եւ յաջողութեան տիպարի ստեղծումը եւ հայ ժողովրդի ու Հայաստանի մասին առաւել տեղեկութիւնների փոխանցումը:

Այնուհետեւ արտայայտուեց Վահիկ Թորոսեանը, ով բարձր գնահատելով հայ ֆուտբոլիստների արձանագրած յաջողութիւնները, երախտիքի խօսք ուղղեց իր ծնողներին, ընտանիքի միւս անդամներին եւ բոլոր մարզիչներին ու վաստակաւոր մարզիկներին, ովքեր իրեն սատար են հանդիսացել մարզանքի ասպարէզում աճելու եւ յաջողութիւններ արձանագրելու ուղղութեամբ:

Պարսիկ հիւրերի անունից ելոյթ ունեցաւ «Գիթի փասանդ» մարզա-մշակութային ակումբի փոխտնօրէն պրն. Առաղիզադէն: Նա գնահատելով Վահիկ Թորոսեանի գործունէութիւնը նշուած ակումբում, որն սկսել է իրանական 1390 թւականից՝ սկզբում որպէս մարզիչ, իսկ այժմ որպէս գլխաւոր մարզիչ, յոյս յայտնեց շուտով պրն. Թորոսեանի նորանոր յաջողութիւնների ականատեսը լինել:

Օրւայ ելոյթների շարանում արտայայտուեց նաեւ Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանը, ով գնահատելով գրքի հեղինակի աշխատանքը՝ յատկապէս դիւրըմբռնելի շարադրանքի, դէպքերն իրական ձեւով ներկայացնելու եւ ծայրայեղութիւններից խուսափելու առումով, կարեւորեց այն փաստը, որ գրքում ոչ միայն ներկայացուած է Վահիկ Թորոսեանի մարզական կեանքն ու յաջողութիւնները, այլեւ նկարագրուած է Իրանի իսլ. յեղափոխութիւնից յետոյ Սպահանի եւ Շահինշահրի հայ համայնքների ձեռքբերումները ֆուտբոլի ասպարէզում: Պրն. Մինասեանն իր խօսքի շարունակութեան մէջ նշելով Սպահանի հայոց թեմի զաւակների մարզական յաջողութիւնները

յատկապէս երկրի ազգային տարբեր հաւաքականներում, կարեւորութեամբ անդրադարձաւ ազգային իշխանութեան դերակատարութեանը սոյն ձեռքբերումների իրականացման գործում՝ նիւթական ներդրումների եւ մարզական հնարաւորութիւնների ստեղծմամբ:

Շնորհանդէսի շարունակութեան մէջ ցուցադրուեց տեսանիւթ, որտեղ լուսանկարներով հանդիսատեսին ներկայացուեց Վահիկ Թորոսեանի մարզական կեանքը:

Այնուհետեւ գերշ. Սրբազան Հօր ձեռամբ եւ թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետ Վարուժ Մինասեանի, Թեմական խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի եւ Վահիկ Թորոսեանի ընկերակցութեամբ, տեղի ունեցաւ գրքի գինեձօնի արարողութիւնը:

Երեկոն եզրափակուեց թեմական առաջնորդի հայրական օրհնանքով: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը նախ գնահատանքի խօսք ուղղեց գրքի հեղինակին, ապա իր ուրախութիւնը յայտնելով Վահիկ Թորոսեանի յաջողութիւնների եւ ձեռքբերումների կապակցութեամբ, կարեւորութեամբ ընդգծեց, թէ Աստուած իւրաքանչիւր անհատի մի շնորք է տուել, սակայն կարեւոր է, երբ մարդն իր գործը կատարում է սիրելով, ուրախութեամբ, նուիրումով եւ մասնագիտութեամբ: Գերշ. Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին հանդիսատեսից ուզեց ծափողջոյններով գնահատել գրքի հեղինակի կատարած աշխատանքը եւ Վահիկ Թորոսեանի յաջողութիւնները:

Վերջում ի երախտագիտութիւն կատարած բոլոր անձնազոհութիւնների՝ Վահիկ Թորոսեանը գերշ. Սրբազան Հօր ձեռամբ յուշանուէր նուիրեց իր մօրը՝ Ծովիկ Սարգսեանին:

Միջոցառումն աւարտուեց հիւրասիրութեամբ:

ÄàÔà ì ð¸ ²Î²Ü Ð²Ü¸ÆäàôØ Þ²ÐÆÜÞ²ÐðàôØ

Շահինշահիր հայ համայնքի վարչութեան նախաձեռնութեամբ, հինգշաբթի՝ յուլիսի 10-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Շահինշահիրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում ներկայութեամբ Շահինշահիրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, Համայնքի վարչութեան անդամների, Նոր Ջուղայի եւ Շահինշահիրի ազգայինների, միութենականների եւ համայնքի մեծ թւով անդամների տեղի ունեցաւ ժողովրդական հանդիպում, որի ընթացքում ելոյթներ ունեցան Իրանի իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ռոբերտ Բեգլարեանը եւ իրաւաբան պրն. Ռազմիկ Տէր Մկրտչեանը:

Հայ համայնքի վարչութեան անունից, բարի գալըստեան խօսք ասաց Վիոլեթ Յարութիւնեանը, ով հրաւիրեց մեծարգոյ պատգամաւորին իր ելոյթը ներկայացնելու: Վերջինս նախ փոխանցեց երկրի պետական շրջանակների եւ պատասխանատու մարմինների դրական մօտեցումը եւ բարեացակամութիւնը կրօնական փոքրամասնութիւնների նկատմամբ՝ ի մասնաւորի հայերի՝ իբրեւ Իրանի արհեստագործութեան, տնտեսութեան, գիտութեան, կրթա-դաստիարակչութեան եւ մշակութային ոլորտներում առաջատար քաղաքացիներ: Իր բովանդակալից ելոյթի ընթացքում, յարգելի պատգամաւորը ներկայացրեց Իրանի իսլ. հանրապետութեան Կանոնագրութեան մէջ կրօնական փոքրամասնութիւնների համար սահմանուած կանոնները: Նա յստակօրէն նշեց կրօնական փոքրամասնութիւնների իրաւունքների եւ պարտականութիւնների մասին, շեշտելով դրանք յարգելու եւ գործադրելու անհրաժեշտութիւնը:

Այնուհետեւ հրաւիրուեց իրաւաբան պրն. Ռազմիկ Տէր Մկրտչեանը, ով օրէնքի լոյսի ներքոյ՝ շահեկան բացատրութիւններ տուեց իրաւաբանական խնդիրների կապակցութեամբ: Նա իր ելոյթում ընդգծեց Օրէնսգրքում կրօնական փոքրամասնութիւններին տրուած իրաւունքները:

Ներկաների կողմից հնչեցին հարցումներ, որոնց արժանի եւ յարմար կերպով պատասխանեցին յարգարժան դասախօսները: Հնչող հարցերին տրամաբանական մօտեցում դրսեւորած զոյգ դասախօսների լուսաբանումներից գոհ մնացին ներկաները:

Հանդիպման եզրափակիչ խօսքը հանդիսացաւ հոգշ. Հայր Սուրբի հայրական պատգամը, ով վկայակոչելով Սուրբ Գրքում խոնարհ եւ առաքինի մարդու նկարագիրը՝ բարձր գնահատեց օրէնքը յարգող եւ նրա հանդէպ իր պարտականութիւնները կատարող հայորդիներին: Նա յոյս յայտնելով, որ իրանահայերը ինչպէս միշտ բարձր պահելով հայի բարի համբաւը՝ կը վայելեն պետական այրերի եւ շրջանակների յարգանքն ու վստահութիւնը, քաջառողջութիւն եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Այդ երեկոյ նաեւ, առիթ ընձեռուեց համայնքի անդամներին, որ աւելի մտերմիկ մթնոլորտում դիմեն յարգելի պատգամաւորին եւ ուղղուրդուեն իրենց յուզող հարցերի վերաբերեալ:

ՆԱՒԱՍԱՐԴԸ՝ ԵԱՀԻՆԵԱՀՐՈՒՄ

Նախաձեռնութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահիրի մասնաճիւղի Երէցական միաւորի, հինգշաբթի՝ օգոստոսի 14-ի երեկոյեան ժամը 7:00-ին «Սրբոց Վանդանանց» դպրոցի շրջափակում կազմակերպուել էր ուրախ ժամանց՝ Նաւասարդ տօնի առիթով:

Աւանդական իրերով եւ պարագաներով զարդարուած բեմը գեղեցիկ տեսարան էր ստեղծել հանդիսատեսի համար:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ Լինա Մովսիսեանը, ով ամփոփ կերպով ներկայացրեց հայոց հին Ամանոր Նաւասարդի պատմութիւնը: Այնուհետեւ բեմը տրամադրուեց հնչող հայկական ուրախ երաժշտութեանը:

Օրուայ առիթով պատրաստուել էին նաեւ աւանդական ախորժելի ուտեստներ:

Տօնական հանդէսը աշխոյժ պահեր պարգեւելով ներկաներին տեւեց մինչեւ ուշ երեկոյեան:

Ս. ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ՇԱՀԻՇԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ 2014 թւականի օգոստոսի 17-ի առաւօտեան Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մատուցեց Ս. եւ անմահ Պատարագ, Ս. Աստուածածնի Վերափոխման տօնի առիթով, Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ դպրաց դասի ներկայութեամբ: Օրուայ խորհրդին իրենց առատ նուիրատուութեամբ ներկայ էին համայնքի բարեպաշտ հայորդիները:

Հոգշ. Հայր Սուրբն արարողութիւնից յետոյ իր քարոզում շնորհաւորելով Խաղողօրհնէքի տօնը՝ գեղեցկօրէն անդրադարձաւ Ս. կոյս Մարիամի առաքինի կերպարին, նշելով, որ Աստուած ընտրեց Ս. կոյսին որպէս Աստուածամայր, քանզի նա համեստ, առաքինի եւ բարեպաշտ էր: Յիսուս Քրիստոսի լոյս աշխարհ գալով, առիթը տրուեց մարդկութեանը՝ ադամական մեղքից փրկուելու համար: Իսկ Ս. կոյսը մինչ իր կեանքի վերջը կոյս մնալով՝ երբեք մեղք չգործեց եւ միշտ հաւատաց Աստծուն: Նա իր բարութեամբ դաստիարակեց Յիսուսին եւ այսօր եւս բարեխօս է Աստծու եւ Յիսուսի մօտ՝ մեզ համար: Ս. կոյս Մարիամի ննջումից յետոյ նրա անարատ մարմինը երկինք է փոխադրուել իր Որդու միջոցով:

Հոգշ. Հայր Սուրբն ակնարկելով Յիսուսի խօսքերին՝ ասաց. «*Ինչպէս խողողի հատիկներն են կախուած ողկոյզից, այնպէս էլ հաւատացեալներն են միացած Յիսուս Քրիստոսին, որին հաւատալով ձեռք կը բերւի փրկութիւնը*»: Նա աղօթեց, որ Աստուած բոլոր հիւանդներին՝ առողջութիւն, երիտասարդներին՝ երջանկութիւն եւ գործի յաջողութիւն, իսկ մայրերին արեւշատութիւն պարգեւի, ապա իր եւ Շահինշահրի հայ համայնքի վարչութեան անունից շնորհաւորեց բոլոր նրանց՝ որոնց անուան տօնն էր, յատկապէս Մարիամ անուն ունեցողներին եւ շնորհակալութիւն յայտնեց Շահինշահրի հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամներին, դպրաց դասին, երիտասարդներին եւ բոլորին՝ իրենց գեղեցիկ ներկայութեան համար:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ Խաղողօրհնէքի արարողութիւն եւ Շահինշահրի հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամուհիների համագործակցութեամբ ու դասաւորութեամբ օրհնած խաղողը բաժանուեց ներկաներին:

ՄԻՕՐԵԱՅ ԶԲՕՍԱՆՔ ԱՅԳՈՒՄ

Հովանաւորութեամբ Շահինշահրի հայ համայնքի վարչութեան եւ հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, երեքշաբթի՝ օգոստոսի 12-ին կազմակերպուել էր միօրեայ զբօսանք՝ «Նարօտ» մանկա-պատանեկան երգչախմբի անդամների համար: Խմբի անդամները՝ կազմակերպիչների եւ Ծնողական խորհրդի ուղեկցութեամբ, նշուած օրը առաւօտեան ժամը 8:00-ին, նախատեսուած երկու հանրակառքով շարժուեցին դէպի Սպահան քաղաքի շրջակայքում գտնուող մի յարմարաւէտ այգի:

Մասնակիցներն անցկացրին զուարճալի եւ յագեցած զբօսական ժամեր՝ շնորհիւ Հայր Սուրբի կազմակերպած հետաքրքիր խաղերի եւ երգի ու պարի մրցոյթների, որոնց մեծ խանդավառութեամբ մասնակցեցին ներկաները եւ լաւագոյնները վաստակեցին բարձր գնահատականներ՝ օրուայ նշանակուած իրաւարար կազմի քաջարկութեամբ եւ խրախուսուեցին:

Մասնակիցները վայելեցին Ծնողական խորհրդի միջոցով պատրաստուած համեղ ուտեստները:

Հարկ է նշել, որ սոյն ծրագրի իրականացմանն իր համագործակցութիւնն էր ցուցաբերել պրն. Վարուժ Մինասեանը:

Զբօսավայրում աշխոյժ պահեր անցկացնելուց յետոյ, նրանք ուշ երեկոյեան վերադարձան տուն:

êÎ²àôî²Î²Ü ´²Ü²ÎàôØ Þ²ÐÆÜÞ²ÐðàôØ

Հինգշաբթի՝ յուլիսի 3-ի առաւօտեան ժամը 9:30-ին, հովանաւորութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Ճահինշահրի մասնաճիւղի վարչութեան, նախաձեռնութեամբ մասնաճիւղի Սկաուտական միաւորի եւ համագործակցութեամբ օժանդակ մարմնի, կազմակերպւել էր սկաուտական երկօրեայ բանակում՝ Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցում:

Բացման արարողութիւնից յետոյ սկաուտներն անցան իրենց աշխատանքին:

Երկօրեայ բանակումի ընթացքում, շուրջ 30 մասնակիցներ ուրախ ու ջերմ ընկերական մթնոլորտում իրականացրին նախատեսւած յագեցած ու պատշաճ ծրագիրը, որը պարունակում էր՝ ֆիզիքական աշխատանք, խաղեր ու մրցոյթներ:

Բանակումն աւելի իմաստաւորւեց, երբ յուլիսի 4-ի երեկոյեան ժամը 7:30-ին՝ մասնաճիւղի վարչութեան հրաւէրով, բանակատեղի այցելեցին Ճահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը եւ Սկաուտական միաւորի նախկին պատասխանատու՝ դեր խմբապետ ընկեր Էդւին Բաբումեանը, որոնց ջերմօրէն ընդառաջեցին կազմակերպիչները եւ սկաուտները: Մասնաճիւղի վարչութեան նախագահ պրն. Գեւիկ Խաչատրեանի բարիգալստեան եւ շնորհակալական խօսքից յետոյ, հոգշ. Հայր Սուրբի ձեռամբ ընկեր Էդւին Բաբումեանին յանձնւեցին վերոյիշեալ վարչութեան կողմից պատրաստւած գնահատագիր եւ յուշանուէր՝ մասնաճիւղի Սկաուտական միաւորին նրա մատուցած ծառայութեան առիթով:

Գնահատանքի արժանացած ընկերը եւս նախ շնորհակալութիւն յայտնեց հոգշ. Հայր Սուրբին՝ նրա կատարած բարի ու օգտառատ ցուցումների եւ խորհուրդների համար, մասնաճիւղի ներկայ եւ անցեալ վարչութիւններին՝ ցուցաբերած հովանաւորութեան ու աջակցութեան համար, ապա խօսքն ուղղելով սկաուտներին՝ նրանց յորդորեց միշտ լինեն աչալուրջ ու կարգապահ եւ շարունակ բարձր պահեն սկաուտին վայել կոչումը: Յուզառատ էր յատկապէս այն պահը, երբ աստիճանաւոր սկաուտները հերթաբար մօտենալով իրենց նախկին պատասխանատուին, սկաուտական ծէսով շնորհակալութիւն յայտնեցին նրան:

Այնուհետեւ, նախատեսւած հիւրասիրութեան ընթացքում, այդ գեղեցիկ օրւայ առիթով, սկաուտների կատարմամբ հնչեցին ազգային-յեղափոխական երգեր:

Սոյն գնահատման արարողութիւնն իր հայրական պատգամով եզրափակեց հոգշ. Հայր Սուրբը, ով անդրադարձաւ սկաուտական կեանքի բարձր նշանակութեանը՝ իւրաքանչիւր հայորդու ֆիզիքական եւ բարոյական դաստիարակութեան կարեւոր գործում եւ նշեց. «*"Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր"-ը սկաուտականի նշանաբանն է։ Բայց ես միշտ մտածել եմ՝ սկաուտականը մեզ տալիս է երեք կարեւոր բան՝ պատիւ, հաւատարմութիւն եւ երախտագիտութիւն։ Քանի որ սկաուտները սովորում են ինչպէս պահել հայի պատիւը՝ երգերի, մտածումների, արտայայտութիւնների եւ գործունէութեան ճամբով։ Իսկ ինչ վերաբերում է հաւատարմութեան. քիչ առաջ մենք ականատես եղանք, թէ ինչպէս մեծ սկաուտներն եկան եւ սկաուտական բարեւով իրենց հաւատարմութիւնը յայտնեցին նախկին պատասխանատուին։ Սա մի պատկեր է, որով մենք*

սովորում ենք հաւատարիմ լինել մեր ազգին, եկեղեցուն, մեծերին եւ պատասխանատուներին։ Նաեւ՝ երախտագիտութիւն. սիրելի սկաուտներ, երբեք չմոռանաք որեւէ մէկի կատարած լաւութիւնը, ահաւասիկ սկաուտականի մէջ այդ երախտագիտութիւնը, մենք ուսուցանւում ենք մեծերի կողմից»: Իր խօսքի աւարտին, հոգշ. Հայր Սուրբը բարձր գնահատեց ընկեր Էդուին Բաբումեանին, ով միշտ փայլել է իր աշխատասիրութեամբ, յանձնառութեամբ եւ նուիրուածութեամբ: Հայր Սուրբն իր բարձր գնահատականն ուղղեց նաեւ մասնաճիւղի վարչութեանը, միաւորին եւ օժանդակ մարմնին, այդ գեղեցիկ հաւաքը եւ բանակումը կազմակերպելու համար՝ յոյս յայտնելով որ սկաուտականի թիւը համայնքում աւելի պէտք է աճի ու միաւորը աւելի պէտք է կազմակերպի:

Բանակումի փակումը տեղի ունեցաւ ուրբաթ՝ յուլիսի 4-ի առաւօտեան ժամը 9:30-ին:

Յատկանշելի է, որ սոյն բանակումի իրագործմանն իր համագործակցութիւնն էր ցուցաբերել Շահինշահրի հայ համայնքի վարչութիւնը՝ դպրոցի շրջափակը տրամադրելով մասնաճիւղի վարչութեանը:

ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ԿԱՆԱՆՑ ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՒԱԾ ԶԲՕՍԱՆՔ

Հովանաւորութեամբ Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ու համայնքի վարչութեան եւ նախաձեռնութեամբ համադրող յանձնախմբի, չորեքշաբթի՝ 2014 թւականի օգոստոսի 27-ին կազմակերպւել էր միօրեայ զբօսանք՝ համայնքի Կանանց հոգեւոր լսարանի համար:

Ըստ կազմակերպիչների հրապարակած յայտարարութեան, սոյն զբօսանքին կարող էին մասնակցել նաեւ լսարանին ոչ-անդամակցող հայուհիներ՝ հրապարակւած թւականին արձանագրւելով համադրող յանձնախմբի մօտ:

Վերոյիշեալ թւականին, առաւօտեան ժամը 8-ին, շուրջ 55 մասնակից, կազմակերպիչների ուղեկցութեամբ, մեկնեցին դէպի Սպահան քաղաքի շրջակայքում գտնւող մի յարմարաւէտ այգի՝ իրենց միօրեայ հանգիստն անցկացնելու համար:

Զբօսանքային օրն առաւել հաճելի եւ արդիւնաւէտ դարձնելու նպատակով ծրագրւել էին կրօնական գիտելիքների մրցոյթ եւ զւարճալի խաղեր, որին խանդավառութեամբ մասնակցեցին ներկաները: Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն: Մասնակիցները վայելեցին նաեւ յանձնախմբի ձեռամբ պատրաստւած համեղ ուտեստները:

Հարկ է նշել նաեւ, որ սոյն ծրագրի իրականացմանն իր համագործակցութիւնն էր ցուցաբերել յարգարժան պրն. Վարուժ Մինասեանը:

Երեկոյեան ժամը 8:30-ին, մի հաճելի օր անցկացնելուց յետոյ, մասնակիցները վերադարձան տուն:

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Զ.Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութեան

Ս. Գէորգ եկեղեցի

- 1,000,000-ական դրամ. Սարօ Այլազեան, Յովիկ Ծատուրեան, Լիանա եւ Էրիկ Ղազարեաններ, Մանէ Բարսեղեան, ոմն
- 500,000-ական դրամ. Մարինա Ղարախանեան, Արաքս Բարսեղեան, Հրաչիկ Ղեւոնդեան, Ամիտ Աղազադեհ, Փեժման Թողիանի, ոմն՝ հանգուցեալ Ամովս Խուդաբախշեանի յիշատակին
- 400,000 դրամ. Նազառի
- 300,000-ական դրամ. Նարէ Շահիջանեան, ոմն
- 280,000 դրամ. ոմն
- 150,000 դրամ. Ալիփուռ
- 100,000-ական դրամ. Հայդուկ Մարգարեան, Լիդա Զարգարեան, Անուշ Ղարախանեան՝ հանգուցեալ Վարդուհի Քեշիշեանի յիշատակին, Ալիփուռ, ոմն

Խաչի զոյգերու առթիւ

- 300,000 դրամ. Աննա Շահբազեան
- 150,000-ական դրամ. Անահիտ Օհանեան, Սեդա Բարղեան
- 120,000 դրամ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան
- 50,000 դրամ. ոմն

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի

- 1,000,000 դրամ. Լիա Սահակեան
- 500,000 դրամ. Սոնիա Քամարզարեան

Հանգուցեալ Սուքիազ Բաբումեանի յիշատակին

- 500,000 դրամ. Վարուժ Մինասեան
- 200,000 դրամ. Հրաչ Մինասեան
- 150,000 դրամ. Արեւիկ Ալլահվերդեան

Հանգուցեալ Եղինար Մկրտչեան-Ցարութիւնեանի յիշատակին

- 200,000 դրամ. Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ
- 150,000-ական դրամ. Աստղիկ Թահմազեան, Ռուբէն Մարկոսեան, Զաւէն Մուրադեան
- 100,000 դրամ. Վարդանուշ Մկրտչեան
- 50,000-ական դրամ. Համազ Մարգարեան, Սիլվարդ Աղախանեան

Հանգուցեալ Արստակ Մարկոսեանի յիշատակին

- 2,000,000 դրամ. Արմոնդ, Սասուն, Արբի, Քարմէն եւ Սօսէ Մարկոսեաններ
- 1,000,000 դրամ. Ղարղուն գիւղի եկեղեցու վարչութիւն
- 500,000-ական դրամ. Մասիս եւ Վանուհի Ղազարեաններ, Վազրիկ Մարկոսեան
- 300,000-ական դրամ. Սարդար Ղազարեան, Այդա եւ Ժիրայր Ղարիբեաններ, Ռուբէն Ղարիբեան
- 250,000-ական դրամ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կանանց յանձնախումբ, Յակոբ Մարկոսեան, Վարդգէս Պետրոսեան,
- 200,000-ական դրամ. Ղուկաս եւ Հրաչիկ Ծատուրեաններ, Գարեգին Մարկոսեան, Վարուժ եւ Սթելլա Վարդանեաններ, Դիանա Ղարախանեան, Անդրէ Մարկոսեան, Նորիկ Յարութիւնեան, Նորիկ Շահնազարեան, Ալբերթ եւ Հիլդա Քեշիշեաններ, Սթելլա Ղարիբեան, Ռայմոնդ Օհանեան
- 150,000 դրամ. Սիլվարդ Թորոսեան
- 120,000 դրամ. Ռաբերթ Ակոն
- 100,000-ական դրամ. Զանի Ղազարեան, Ռիմա Դիլանչեան, Հայկազ Պետրոսեան, Անուշաւան եւ Հրանուշ Աղաբաբայեաններ, Մինաս Թահմազեան, Արտուշ եւ Ֆրիդա Ղարիբեաններ, Ռազմիկ Մարկոսեան, Աղաւնի Մարկոսեան, Եզնիկ Մարկոսեան, Առաքել Խուդավերդեան
- 80,000 դրամ. Մուշեղ եւ Բալասան Ղարիբեաններ
- 50,000 դրամ. Բագրատ Սիմոնեան

Հանգուցեալ Գալստան Ծատուրեանի յիշատակին

- 200,000 դրամ. Կայծակ եւ Դիանա Կարապետեաններ

Հանգուցեալ Վիգէն Խաչիկեանի յիշատակին

- 500,000 դրամ. Անժել Մարութեան

Հանգուցեալ Յովհաննէս Թահմազեանի յիշատակին

- 100,000-ական դրամ. Անահիտ Թահմազեան, Շահէն եւ Թամար Թահմազեաններ, Ծաղկուշ Թահմազեան
- 50,000 դրամ. Արմինէ Թահմազեան

Հանգուցեալ Փերիխան Աւետեան-Մարգսեանի յիշատակին

- 500,000 դրամ. Աբդալ եւ Էդիսն Յովսէփեաններ
- 200,000 դրամ. Սասուն Դադանեան
- 120,000 դրամ. Ռաբերթ Ակոն

Հայ դատի Ն.Զ. յնչնախումբ

- 5,000,000-ական դրամ. Սառիկ, Համիկ, Ռիմա, Զարեհ Բաղումեաններ՝ ընտանեօք, իրենց ամուսնու եւ հօր՝ Ղազար Բաղումեանի յիշատակին, Մնաս եւ Թեւան Զարգարեաններ՝ իրենց ծնողների՝ Կարապետ եւ Վարդուշ Զարգարեանների յիշատակին

Ծանր հիւանդների օժանդակող հիմնադրամ

- 5,000,000 դրամ. Մնաս եւ Թեւան Զարգարեաններ՝ իրենց ծնողների՝ Կարապետ եւ Վարդուշ Զարգարեանների յիշատակին

Ն.Զ Հայոց ազգային «Արմէն» դպրոց

- 30,000,000 դրամ. Ռուբէն Մկրտչեան
- 2,000,000 դրամ. Սոնիա, Արմոնդ Մկրտչեան՝ Ժուլիեթ Փանոսեանի յիշատակին
- 1,500,000 դրամ. Լուսին Մկրտչեան
- 1,000,000-ական դրամ. Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Սերգէյ Ղազարեան, Դիանա Ղարախանեան
- 500,000-ական դրամ. Արգիշտի Քեշիշեան, Նազիկ Աբէլեան, Արգիշտի Ղարիբեան
- 300,000-ական դրամ. Գեւիկ Խաչատրեան, Էմին Բաղրամեան, Արազ եւ Ռաֆֆի Վարդումեաններ՝ Մարօ Բաղդասարեանի յիշատակին
- 200,000 Լէօ Շահիջանեան, Էդմոնդ Բաղդասարեան

Ց-րդ դասարանների աւարտական հանդէսի առթիւ

- 1,000,000-ական դրամ. Անիա Թորոսեան, Թէա Թահմազեան
- 500,000-ական դրամ. Ալմարա Թահմազեան, Արգիշտի Ղարիբեան, Մենուա Քեշիշեան, Տաթեւիկ Տէր Մարտիրոսեան,

Վարագ Փանոսեան, Սելին Մկրտչեան, Ռենիա Մինասեան, Արգամ Յովսէփեան, Մինելի Ղազարեան, Թոմիկ Մարկոսեան, Նինէ Բարղեան, Մհեր Գուրգէնեան, Արսիս Յովհաննիսեան, Փաթրիկ Ակոն

- 400,000 ռիալ. Արեգ Յարութիւնեան
- 300,000-ական ռիալ. Շանթ Մելքոնեան, Նժդեհ Սիմոնեան, Խաթունիկ Ալեքսանդրեան
- 250,000 ռիալ. Լուսին Յովսէփեան
- 240,000 ռիալ Անիա Յովհաննիսեան
- 200,000-ական ռիալ. Ն.Զ. Հայոց ազգային մանկապարտէզ, Ն.Զ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոց, Ն.Զ. Հայոց ազգային «Կատարինեան» դպրոց, Արսիս Ղեւոնդեան, Քրիստին Մարկոսեան, Հայկ Հայրապետեան, Լիանա Ղազարեան, Էրիքա Գէորգեան, Արթուր Քամարզարեան, Վանասիս Պարսամեան, Վանասիս Դաւթեան, Էմին Բաղրամեան, Ժանօ Շահիջանեան, Վահագն Թահմազեան, Դւին Յովհաննիսեան, Անի Մկրտչեան, Լէօ Շահիջանեան

- 100,000 ռիալ. Արսինէ Հայրապետեան

Փերիոյ կրթասիրաց միութիւն

85-ամեակի առթիւ

- 10,000,000 ռիալ. Վարուժ Մինասեան
- 5,000,000 ռիալ. Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհուրդ
- 100 Ա.Մ.Ն. դոլար. Արմենուհի Մինասեան
- 3,000,000 ռիալ. Փերիոյ կրթասիրաց միութեան Շահինշահրի մասնաճիւղ
- 3,000,000 ռիալ. Հայկ Յովսէփեան
- 2,000,000-ական ռիալ. Հայ դատի յանձնախումբ, Տ. Խաչատուր Քհնյ. Զարգարեան, Հայկազ Ղազարեան, Թաթուլ Օհանեան, Ալբերտ Զարգարեան, Արշամ Ղազարեան, Շահինշահրի հայ համայնքի վարչութիւն, Վազրիկ Մարկոսեան, Սերժիկ Բաղրամեան, Ստեփան Մինասեան, Վրէժ Տ. Մարտիրոսեան
- 1,500,000 ռիալ. Նորիկ Մարկոսեան, Մինաս Թահմասեան, Վարուժան եւ Սօնիկ Բաղումեաններ, Ն.Զ. Հայ կանանց բարեգործական ընկերութիւն, Հայ Ուս. «Հհարմահալ» միութիւն, Գարեգին Մարկոսեան, Հայկազ եւ Ծաղկուշ Դաւթեաններ
- 1,200,000 ռիալ. Արարատ եւ Ժաքլին Քեշիշեաններ
- 1,000,000-ական ռիալ. Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Խաչիկ Յովսէփեան, Մասիս եւ Իշխանուհի Քեշիշեաններ, Հայրօ Քեշիշեան, Միքայէլ Զոհրաբեան, Հայկազ Խաչատրեան, Հայկազ Պետրոսեան, Ասպետ Իսաղուլեան, Հրաչ Հայրապետեան, Սերժիկ Քեշիշեան, Հայկազ Ղարիբեան, Սոնիկ Կիրակոսեան, Բագրատ Սիմոնեան, Մէրի Մելիքեան, Հիլդա Ծառուկեան, Այլին եւ Սուրէն Յակոբեաններ, Վարդգէս եւ Էլիզ Ղուկասեաններ, Յովհաննէս Ղազարեան, Զաւէն Ղարիբեան, Հայրապետ Ստեփանեան

- 700,000 ռիալ. Մարի Ղազարեան
- 600,000 ռիալ. Էմմա Դեհբաշեան
- 500,000 ռիալ. Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախումբ, «Շուշանիկ» երգչախումբ, Տիգրանուհի Օրոջեան, Դիանա Ղարախանեան, Էդմոնդ Ղազարեան, Պօղոս Յովսէփեան, Հրաչ Տէր-Յովաննիսեան, Ամիրխան եւ Ռուբինա Յովսէփեաններ, Անդրանիկ Սիմոնեան, Զարդիկ Բաբումեան, Երուանդ եւ Վիոլեթ Թորոսեաններ, Ադլին Յարութիւնեան, Վարդուշ Զարգարեան, Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ, Վիգէն եւ Սքաղլեթ Մարկոսեաններ, Յունան Դեհբաշեան, Թենի Համազասպեան, Սարօ Այլազեան, Մարալ Ղարիբեան, Սոնիկ Դիլանչեան, Խաչիկ Սահակեան, Ովսաննա Ղազարեան, Սիլա Յովսէփեան, Թովմաս Դեհբաշեան, Վարդուհի Յովսէփեան, Լիդա Սահակեան, Հրաչ Մուրադեան, Պերճուհի Նազարեան, Յասմիկ Մինասեան, Լուսիկ Ասատրեան, Անդրանիկ Ասատրեան, Անահիտ Աղախանեան, Լուսիկ Մարտոյեան, Աիդա Ղարիբեան (Սիմոն), Արեւիկ Սահակեան, Վանէ Թահմասեան, Անդրանիկ Մինասքանեան

- 400,000-ական ռիալ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան, Հրաչիկ Յովսէփեան, Մկրտիչ Մարկոսեան
- 300,000-ական ռիալ. Վանա Զոհրաբեան, Համիկ Ալեքսանդրեան, Անդրանիկ Ղազարեան, Ալինէ Յարութիւնեան, Արշալոյս Պարսամեան, Վիոլեթ եւ Համլեթ Մինասեաններ, Խորէն Խուդավերդեան, Քլար Յարութիւնեան, Բալասան Դիլանչեան
- 200,000-ական ռիալ. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեան, Խորէն Խուդավերդեան, Անահիտ եւ Ռազմիկ Գրիգորեաններ, Սուրէն Ղարիբեան, Մանիա Գալստանեան, Վարդան Ալեքսանդրեան, Կարէն Իւնիկեան
- 100,000-ական ռիալ. Սամսոն Զարգարեան, Համասփիւռ Մարգարեան

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Այիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչուող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Վիոլեթ Յարութիւնեանը։

Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրում է պրն. Գեւիկ Խաչատրեանը։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

خلیفه گری ارامنه جلفای اصفهان

و جنوب ایران

صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98–311–6243471-2
Fax: +98–311–6270999

ԲԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՕԹՄԱՆ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿ

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՔՆՈՐԴ ԸՆՏՐԵԼՈՒ 10-ԱՄԵԱԿ